ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔԸ ԿԱՆԱԴԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՄԱՐ

Ապրիլի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նամակ է հղել Կանադայի խորհրդարանի Համայնքների պալատի խոսնակ պարոն Փիթըր Միլիքընին: Նամակում Վեհափառ Հայրապետն աշխարհասփյուռ համայն հայության անունից իր երախտագիտությունը և գնահատանքն է հայտնել խորհրդարանի կողմից ապրիլի 21-ին ընդունված որոշման համար, որով Կանադայի օրենսդիր մարմինը պաշտոնապես ճանաչում և դատապարտում է Հայոց Ցեղասպանությունը:

Դիմելով խորհրդարանականներին, Նորին Սրբությունն ի մասնավորի նշում է. *«Մենք երախտապարտ ենք, որ 1915-1923 դաժան տարիներից հետո հայ ժողովուրդն ապաստան գտավ ինչպես Կանադայի օրինյալ հողում, այնպես էլ ամբողջ աշխարհի տարբեր անկյուններում՝ արժանանալով բարեհաճ վերաբերմունքի: 20-րդ դարի առաջին Ցեղասպանության զավակները ոչ միայն փրկություն գտան իրենց նոր հանգրվաններում, այլև բարգավաճեցին, զորացան և դարձան իրենց ապաստանած երկրների հավատարիմ և արժանավոր քաղաքացիները:*

Միավասիկ, մոտենում ենք 2005 թվականին՝ Հայոց Ցեղասպանության 90-րդ տարելիցին, սակայն ցեղասպանությունը դեռևս շարունակում է մնալ մարդկության համար կարևոր խնդիր: Ցեղասպանությունը երբեք չի կարող լինել մեր ժամանակների կրոնական, ընկերային և քաղաքական հակամարտությունների լուծման ուղի: Ցեղասպանության կանխման ուղին դրա ընդունումը և ճանաչումն է: Ցեղասպանության զոհերի՝ թե՛ ողջերի և թե՛ նահատակների համար արդարության հասնելու միակ ուղին դրա դատապարտումն է: Ցեղասպանությունը հանցանք է ոչ թե մեկ ազգի, այլ ավելին՝ մարդու և Աստծու հանդեպ: Այն ծանրագույն հանցանք է մարդկության հանդեպ: Աստծո առանձնակի շնորհը մարդուն կյանք պարգևելն է: Կյանքի պաշտպանությունը վստահված է իշխանություններին, և յուրաքանչյուր պաշտպանված կյանք պարգև է, որը մենք ստիպված ենք Աստծուն: Ուստի, բոլորը պետք է գիտակցեն, որ մարդկային կյանքի դեմ որևէ ոտնձգություն ի սկզբանե պետք է դատապարտվի: Մարդկության պատասխանատուները վերջ կդնեն ձեզ նման խիզախ մարդկանց գործերի շնորհիվ, որոնք նպաստում են արդարության հաղթանակին»: